



## ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ



Երանելին՝ մենակեաց մ'էր նորատի,  
Հոգին՝ ազատ անցաւորին պայմանէն,  
Եւ անձնատուր Երագի մը տարօրէն  
Որ մենութեան անկիւնին մէջ կը փրթթի:

Տըւայտանք մը խոր, անըստփ կարօտի  
Մենակեացին՝ կը պըրկէր սիրտն ու ժգնօրէն,  
Պիտի գըանէ՛ր, երբ դար շընորհն հըրեղէն,  
Պայծառ բրդիսու՛մ՝ աստուածային ոլորտի:

Եւ ազօթքի պահու մը մէջ վերասլաց,  
Հոգւոյն վըճիտ ամենատես աչքը բա՛ց,  
Տեսա՛ւ շարանն հըրաքանդակ տառերուն . . .

Ու դարե՛ր վերջ, նոյն իսկ գըպիբ մ'աննըշան,  
Ա՛յդ նիշերո՞վ թեւ կուտայ իր ներշնչման,  
Սուրբին ձօնուած իբ այս տաղովն անանուն: